

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

27 հունվարի 2009 թ.

թիվ 20-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄՆԻՆ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածները, «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23.1 հոդվածը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 20-րդ, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին ներկայացվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարության օրինակելի ձևը»՝ համաձայն Հավելված 1-ի (կցվում է):

2. Հաստատել «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու կարգը և ժամկետները»՝ համաձայն Հավելված 2-ի (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

**ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ**

Ա. Ջավադյան

2009 թ. փետրվարի 4
ք. Երևան

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2009 թ. հունվարի 27-ի
թիվ 20-Ն որոշմամբ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ N

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

1. Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի՝ իրավաբանական անձի մասով իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի (գործարար հարաբերության) նկատմամբ և (կամ) ի շահ որի իրականացվում է գործարար հարաբերությունը կամ գործարքը:

2. Իրավաբանական անձի իրական շահառուի վերաբերյալ կեղծ կամ անարժանահավատ տվյալներ ներկայացնելը առաջացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

3. Ես՝ _____ անուն, հայրանուն, ազգանուն —ս, հանդիսանալով _____ անվանումը, կազմակերպիչական ձևը _____ իրավաբանական անձի _____ կարգավիճակը _____, հայտարարում եմ, որ նշված իրավաբանական անձը՝

1) ունի իրական շահառու,

2) չունի իրական շահառու (տե՛ս սույն հայտարարության ներկայացնելու կարգի և ժամկետների 3-րդ կետը),

3) չի տիրապետում իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվության (տե՛ս սույն հայտարարության ներկայացնելու կարգի և ժամկետների 4-րդ կետը):

4. Իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվության առկայության դեպքում՝ հայտարարում եմ նրա հետևյալ տվյալները՝

1) _____ անունը, ազգանունը _____,

2) _____ ծննդյան ամսաթիվ (օր, ամիս, տարի) _____ (ենթակա է լրացման տեղեկատվության առկայության դեպքում),

3) _____ բնակության վայր (երկիր, քաղաք, փողոց, շենք, տուն/բնակարան) _____ (ենթակա է լրացման տեղեկատվության առկայության դեպքում),

4) _____ քաղաքացիությունը _____ (ենթակա է լրացման տեղեկատվության առկայության դեպքում),

5) _____ անձնագրի սերիան/համարը, տրամադրման ամսաթիվ _____ (տե՛ս սույն հայտարարության ներկայացնելու կարգի և ժամկետների 5-րդ կետը):

5. Այն դեպքում, երբ անձը նշում է կատարել սույն հայտարարության 3-րդ կետի 2-րդ կամ 3-րդ ենթակետերում, ապա սույն կետում ներկայացվում են իրական շահառուի բացակայության կամ նրա վերաբերյալ տվյալներին չտիրապետելու օբյեկտիվ հիմնավորումները:

____ ամսաթիվ, ամիս, տարի- _____թ.

ստորագրություն

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2009 թ. հունվարի 27-ի
թիվ 20-Ն որոշմամբ

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի ... «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարության օրինակելի ձևը» թիվ ...-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելված 1-ում սահմանված ձևով հայտարարությունը (այսուհետ՝ հայտարարություն) իրավաբանական անձի կողմից ներկայացվում է իրավաբանական անձանց պետական գրանցման, կանոնադրական կապիտալը (բաժնեհավաք կապիտալը և այլն) կամ հիմնադիրների, մասնակիցների, անդամների, փայտերերի, բաժնետերերի կազմը փոփոխելու դեպքում՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21 և 22 հոդվածներով սահմանված կարգով՝ նշված հոդվածներով նախատեսված դիմումը տրամադրելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում:

2. Հայտարարությունը իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին պետք է տրամադրվի թղթային տարբերակով:

3. Հայտարարության 3-րդ կետի 2-րդ ենթակետը՝ «Չունի իրական շահառու» նշվում է այն դեպքում, երբ իրավաբանական անձն օբյեկտիվ պատճառներով չունի կամ չի կարող ունենալ իրական շահառու: Այս դեպքում համապատասխան հիմնավորումներ են ներկայացվում հայտարարության 5-րդ կետում: Իրական շահառու չունենալու հնարավոր դեպքեր կարող են հանդիսանալ, երբ՝

1) գրանցվում է հիմնադրամ:

2) գրանցվում է պետության կողմից հիմնադրվող իրավաբանական անձ:

3) այլ հնարավոր դեպքեր:

4. Հայտարարության 3-րդ կետի 3-րդ ենթակետը՝ «Չի տիրապետում իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվության» կարող է նշվել միայն բաց բաժնետիրական ընկերության դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ անձն օբյեկտիվ պատճառներով չի տիրապետում և չէր կարող տիրապետել իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվության: Այդ դեպքերում համապատասխան հիմնավորումներ են ներկայացվում հայտարարության 5-րդ կետում:

5. Իրական շահառուի անձնագրային տվյալների բացակայության դեպքում՝ իրավաբանական անձը ներկայացնելու իրավասություն ունեցող անձը հայտարարության՝ իրական շահառուի վերաբերյալ տվյալների 4-րդ կետի 5-րդ ենթակետում լրացնում է իր անձնագրային տվյալները՝ փակագծերում նշելով իր անունը և ազգանունը:

6. Միննույն իրավաբանական անձին վերաբերող յուրաքանչյուր հայտարարության վրա դրվում է հերթական համար:

7. Երկու կամ ավելի իրական շահառուների առկայության դեպքում հայտարարության մեջ լրացվում են համապատասխան թվով իրական շահառուների տվյալները՝ յուրաքանչյուրի համար օգտագործելով նույն հայտարարության ձևը՝ իր հերթական համարով:

8. Լրացվող հայտարարության դարձերեսին պետք է նշված լինի սույն հավելվածով սահմանված՝ հայտարարության ներկայացնելու կարգը և ժամկետները: